


Pliny G. Steele
Hyperbush
4/22/09

1909



59(=91.54)
P-59

Ա Տ Ա Ն Ա Յ Ի
Կ Ե Ա Ն Ք Ը



Դ Ր Ա Ց

ՅԱԿՈԲ Յ. ԹԷՐՁԵԱՆ



Տպագր. ԶԱՐԵՎ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ
Կ. ԳՈԼԻՍ, 1909

39(47925)

P-32
u.m

18 APR 2013 04 MAY 2010

ԱՏԱՆԱՅԻ ԿԵԱՆՔԸ

red
2650-41 195
me. 2

Դաստիարակության
Հայոց հանրապետության
առաջարկադիր մասնակիություն

Գ. Բ Ե Ց


ՅՈՒԿՈՒ Յ. ԹԵՐԳԵՅԵՆ

1005
P
009
100



Տպագր. ԶԱՐԵՎ Ն. ՊԵՐՊԵՐԵՍԱՆ
Կ. ՊՈԼԻԱ, 1909

8058



Զ Օ Ն

ԱՏԱՆԱՅԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑԻՑ

Հազարաւոր Հայ Անմահ

ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՈՂԲԱԼԻ

ՅԻՇԵՑՍՎԿԻՆ

Հազարաւորներ դանակէ անցան
Լաց կոծ ու ճիշեր օգուտ չունեցան.
Աննըրմտն թաղեր աւերակ դարձան
Ամենընիս եղանք հոս հոն ցիրուցան

ՅԱԿԹԵՐ

սնա՝
'րե-
լով,
ովին
եր-
/էջ-
սնա
էր,
իկը
պ ի
նակ
ու-
ու-
ար




Ա Ռ Ա Զ Ի Ն Խ Օ Ս Ք

Ոսմ. Տէրութեան աննմոն քաղաքներէն Ատանայի փայլուն
և նախանձելի կեանքն վերջացաւ և հիմա նոր Ատանա մը մէջ-
աեղ կուգայ, որուն համար կը յուսացուի թէ շնորհիւ երիտա-
սարդ ոյժերու նախկին վիճակին մօտենայ:

Այս հրատարակութեանն նպատակը՝ կոկծալի ցաւեր նորոգել
չէ, երբեք, ոչ միայն շքնարն Ատանայի անմոռանալի յիշասակին
յարդանք մը ընծայել և միանգամայն բազմաթիւ հետաքըր-
քերներու անզուսպ փափաքին գոհացում տալ է:

Ատանայի գոնէ վերջին հարիւր տարուան կեանքը, մանրա-
ման և ճշգրիտ պատկերացնելու համար տարիներով աշխատի
հարկ է, Ենթայ աշխատասիրութիւնն՝ Ատանայի վերջին քսան
և հինգ տարուան կեանքին համառօտ մէկ տեղեկադրութիւնն
է: Մանաւանդ վերջին տարիներուն մասին տրուած մանրամասն
և ճշգրիտ տեղեկութիւններն կը յուսամ թէ լոյս պիտի սփռեն
շատերու համար մուլթ մնացած կտերու վրայ:

Յ. Յ. Թ.



Ա Տ Ա Ն Ա Յ Ա Կ Ա Ն Ք Ե

•••••••••••••••

Ա. Մ Ա Ս

Ա Տ Ա Ն Ա Յ Ա Կ Ա Ն Ք Ե



Ի Լ Ի Կ Ի Ո Յ Հ կեդրոնն եղող Ատանա՝
Օսսանհան Տէրութեան ամենէն կարե-
ւոր և պտղաբեր նահանգն ըլլալով,
կը գտնուի Փոքր Ասիոյ հարաւային
կողմը և Միջերկրական Ծովուն հիւսիսային եզեր-
քը, Հալէպ, Գոնիս և ինգարէ նահանգներուն մէջ-
տեղը: Ատանայի նահանգին կեդրոնն եղող Ատանա
քաղաքն՝ որ կիլիկիոյ Ս. Աթոռին աջ բազուկն էր,
կը գտնուի Կաթողիկոսանիստ Սիս քաղաքին մօտիկը
18 ժամ տոգին գէպ ի հարաւ, իսկ Սիսէն գէպ ի
հիւսիս 18 ժամ անդին կը գտնուի Հաճընի Հայաբնակ
քաղաքը: Ատանայի հիւսիսային կողմէն հոկայ Տաւ-
րոսի լեռնաշղթաներուն ստինքներէն քամուած ջու-
րերէն կը կազմուի Սիսուն գետն որ ոլոր մոլոր երկար

Ճամբորդութիւնով մը կուգայ կ'անցնի Ատանայի առեւելեան կողմէն՝ Ատանայի պատմական գարաւոր քարաշէն և ամուր կամուրջին տակէն, և քիչ անդին ձիհունի հետ կը թափին Միջերկրականի ծովը:

Ատանան՝ հին դրութեամբ շինուած պատմական քաղաք մ'էր (*) և վերջին տարիները, չնորհիւ մուտ գտած քաղաքակրթութեան և սուսացած կարեւորութեան, նոր դրութեամբ չէնքերով զարդարուած և եւրոպական քաղաքի մը տեսքն առած էր: Ատանայի գլխաւոր նաւահանգիստն է Մէրսին որուն հետ կը միանայ 67 քիլոմէտր երկարութեամբ երկաթուղիով (2 ժամ), որոնց երկուքին մէջտեղը կը գտնուի Տարսոնի հին պատմական քաղաքը:

Ատանա քաղաքն կը բաղկանար 20,000 տուներէ, որոնք կը պարունակէին տոմարով 80,000 բնակիչ, իսկ տոմարէ գուրս կը մնային ամէն ազգէ պանդուխտներն, որոնց թիւը փոփոխական էր տարւոյն եղանակին համեմատ և միջին հաշւով 20,000 կը սեպուէր: Սոյն թիւը ձմեռուան ատեն կ'աւելնար շրջակայքաղաքներէն գլխաւորաբար Հաճլնէն և կեսարիայէն ու Մարաշէն եկած արհեստաւորներով ու մանրավաճաներով և գարնան ա'լ տւելի կ'աւելնար հեռաւոր տեղերէ Խարբերդէն, Տիգրանակերտէն, Մուշէն, Էրզրումէն և այլ տեղերէ եկող Հայ և Քիւրտ մշակներով և ամառուան կը պակսէր բոլորովին, պանդուխտներն չուելով իրենց երկիրները և տեղա-

(*) Ատանա քաղաքին զարաւոր պատմական շրջաններուն մասին ընդպարձալ տեղեկութիւններ առնել ուզողներուն կը յանձնարեմ կարդալ «Բնաշխարհիկ Բառարան»ի «Ալանա» մասը:

ցիք կը մնային առանձին, արդէն վարժուած տաքին: Ատանայի քաղաքին բնակչութիւնը (1909 Մարտ ամսոյն վերջը) կը կազմէին միջին հաշւով խորամ 62,250, Հայ 30,000 (1908 թուականին պաշտօնական մարդահամարով Հայերէն արձանագրուածներուն թիւն է 17844 ասանեեօթը հազար ութը հարիւր քառասուն և չորս), Յոյն 5000, Ասորի 1250, Քիլտանի 8000, Արապ քրիստոնեաց 500 և օտարահպատակ 200:

Իսլամներուն մէջ հաշուեցինք այն Արապ Ֆելլահ կոչուած երկրագործ գասակարգը որոնք աներեւակայելի ստորնութեամբ մը նախայարձակն եղան Ատանայի թալանին:

Ատանայի քաղաքին ամէնէն պատուաւոր, փառաւոր ու բանուկ թաղերն էին Հայոց և Յունաց: Իսկ իսլամներն, մանաւանդ Արապ Ֆելլահներն նըստած են քաղաքին շուրջը և պարտէզներու մէջ:

Ատանայի մէջ կային, յիսունի մօտ հին ձեւով շինուած մեծ խան-պանդոկներ, տասնէ աւելի նորածեւ օթէլ-իշեւաններ, տասը հատի չափ թատրոններ, քսանի մօտ մզկիթ ու նոյնչափ վարժարաններ և տասը հատ եկեղեցի:

Ատանայի նշանաւոր շէնքերն են, Սիհուն գետին վրայի 22 կամորներու վրայ շինուած և 400 կանգուն երկայնութեամբ և ութը կանգուն լայնութեամբ պատմական կամուրջը, զոր շինել տուած է նշանաւոր Դշխովն Հեղինի, Միսխաթ աննման կամուրջին հետ մէկտեղ: Մեծ շուկան, Պատէսրէնը որ Պոլսոյ շուկային պէս մի քանի գուսով կը գոցուի, և մեր Մայր Եկեղեցին և Ռւլու Ճամփին, Կայլ:

ԿԼԻՄԱՅՑ

Ատանայի կլիման եգիպտոսի նման տաք է, սակայն Սիհուն գետին ջուրը շատ մաքուր և առատ ըլլալուն, առողջութեան տեսակէտով բնական մեծ բարիք մ'եղած է Ատանայի և շրջակայից հսմար:

Մայիսէն կ'սկսի տաքը և ամառուան մէջ մանաւանդ Յուլիս և Օգոստոս ամիսները ջերմաչափը՝ սահերիւաս մինչեւ 35—38 կը բարձրանայ շուքին մէջ: Ահա այս տաքին շնորհիւն է որ Ատանայի արգաստեր հողը կը հասցնէ բամպակ, շուշմա, արմաւինի պէս տաք երկիրներու յատուկ պտուղներ: Իսկ ձմեռը առանց ձիւնի և քիչ անձրեւով չոր և խիստ ցուրտ մը կը տիրէ: Ատանայի մէջ ձիւն շատ քիչ անգամ տեղացած է, հազիւ երեք չորս տարին անգամ մը մի քանի սանթիմի չափ կը տեղայ, զոր ալիւրի պէս կը ժողվեն տեղացիները և կը պահեն օրերով:

Ատանա քաղաքը շրջապատուած է շատ գեղեցիկ պարտէզներով ու ծառերով և ունի բազմաթիւ այգիներ, որոնց կոկիկ ու ճերմակ տուները՝ սքանչելի տեսարան մը կը կազմեն: Նոյնպէս շրջականները կը գտնուին մեծ ու պղտիկ բազմաթիւ չիֆրիներ այսինքն մեծ երկրագործներուն ընդարձակ ագարակներու ցանուքաղի բանսորի տուներ: Ամառուան եղանակին մանաւանդ գիշերները սոսկալի տաքին հետ թունախաղթ մժեղներն ալ անտանելի են:

ԳՈՐԾԱԲԱՆՆԵՐ

Ատանայի մէջ կային քսանի չափ շոգեշարժ գործարաններ (fabrique), որոնք բամպակի կուտերը կը

զատէլին ու կը զտէին, բամպակէ դերձան կը շինէին, կտաւ կը գործէին, ալիւր և սառ կը պատրաստէին ևալին: Սոյն գործարաններուն սուլումները և հազարաւոր գործաւորներու հաւաքումն ու արձակումը եւրոպական մեծ քաղաքի մը տպատորութիւնը կ'ընէին: Մեծ գործարաններէն զատ թաղերու մէջ կային պարկիրով գարձող ջաղացներ (տինկ), որոնցմէ ոմանք աղքատիկ գասակարգին ալիւր և պուլկուր կը պատրաստէին և ուրիշներ չուշմայի իւղ (սուսամ եազը, huile de sésame) կը հանէին և դահին ու հէլվաններ կը պատրաստէին:

Հայոց պատկանողներէն Աշբարց գործարանէն զատ, որ զօրանոցին մօտ ըլլալուն պատճառով աղատեցաւ, միւսներն ամբողջապէս այրեցան և մնացին միայն Յոյներէ ոմանց և Թուրքերունները, որոնց կարեւորներն են Թրիփանի եղբարց ընդարձակ գործարանը, Արնավուտ Պօնալլ Սալիհ էֆ.ի, Կողմա էֆ.ի, Պօտուր Օղլուի, Գօգօնաքիի, Փամուգձը Միսթիլլի (Մուսդափա աղա), Մէնմէտ աղայի, Փաթիլնօսի գործարանները ևալին:

ԱՊՐՈԽԱՑ

Ատանայի ժողովուրդին երկսեռ աղքատիկ գասակարգը ամառուան տաքին Ատանայի շրջակայ գիշերը և աղքարակները երթալով բամպակի շերամները կը ժողուէին որուն իրեւ վարձք կ'առնէին ըստ սովորութեան իրենց ժողվածին մէկ ութերորդ կամ տասներորդը, զոր ծախելով կը ճառէին շատեր իրենց տուներուն վարձքը, վճարելու համար տան տիրոջ Նոյեմբեր 1ին: Իսկ ձմեռը կիները գիշեր ցորեկ կ'աշ-

խառէին, շերամին բամպակը կեղեւէն քաշելով ու զատելով, որուն կ'ըսեն տեղացիք զօղս սիմիկէ, և ասոր ի վարձ կ'առնէին իւրաքանչիւր չէքի (40 օխա) համար 2-3 գահեկան։ Ծատ լնտանիքներ, մանաւանդ այրի կիներ իրենց ապրուստը կը հոգային սոյն աշխատութիւնով։

Ատանացիք գարերէ ի վեր երկրագործ եղած են ընդարձակ ագարակներու ժառանգութեամբ սերունդէ սերունդ, և երկրագործութեան կը պարտէր Ատանան իր յառաջդիմութիւնը։ Երկրագործ գասակարգը ամառը կ'աշխատէր և ձմեռը գրեթէ հանգիստ կ'ընէր։ Հարուստներէ զատ միջին և ստորին գասակարգէն շատ քիչեր իրենց անձնական տուները ունէին, մեծամասնութեամբ վարձքով և այն ալ սուղ վարձքով կը նստէին։ Ահա այս պատճառով էր որ մէկ տունի մէջ շատ անգամ երկու, երեք, մինչեւ չորս և աւելի ընտանիքներ կը նստէին։ Տուները ունէին ընդարձակ բակեր, շատ անգամ հինգ տասը տուն մէկէն մէկ բակի մէջ կը գտնուէին և այս պատճառով նաև աղքատիկ կաթնավաճառներու թաղերու մէջ կապած կովերուն ներկայութեամբը երբեմն թաղեր մեծ զիւղի մը տպաւորութիւնը կուտային։ Ահա այսպէս Ատանան չնորհիւ յառաջդիմութեան թէ՛ մեծ ու աննման քաղաք մ'էր և թէ երկրագործութեամբ մեծ զիւղ մը։

Ատանայի ժողովուրդը շատ ժրաջան էր, ամառը այն ամենասուկալի կիզիչ արեւին դէմ ագարակներու մէջ մըջիւններու պէս կ'աշխատէին և ձմեռն ալ ընդհակառակը մեծ մասով հանգիստ կ'ընէին։ Աշխատութեան մասին շատ ճշգապահ էին, ժամանակին կ'աշխատէին և ժամանակին հանգիստ կ'ընէին։ Երկրագործները ամառը կ'աշխատէին և ձմեռը կ'ուտէին, իսկ

արհեստաւորներն ու պանդուխտները ցորեկը ոգի ի բռին կ'աշխատէին իրենց օրականը շտկելու համար և երիկունը կը տեսնուէր որ իրեն ց հաճոյքին ու զուարձութեան մէջ թաղուած էին։ Հոս տեղն է յիշել մասվաճառ մեր սիրելի Միսաքը, որ իր հոկայ կազմուածքով ու գեղեցիկ գիմազիծերով և մանաւանդ հազուագիւսով մեծ համարում կը վայելէր, Ատանայի Հայութիւնը կը գուրգուրար գասապ Միսաքին վրայ որուն ներկայութիւնը ծակէ ծակ կը փախցնէր Թուրք և Հայ գապատայի չարագործները։ Իրիկունները միշտ գլուխը տաքցուցած պատւոյ սահմանին մէջ կը գողացնէր շուկաներն ու թատրոնները։ «Գասապ Միսաքը եկաւ» լուրը կը բաւէր որ ամէն մարդ պատիւն ճանչնար և իր պատեանին մէջ քաշուէր և այս պատճառով էր որ թատրոնի տէրերը մատնաւոր վարձքով իրիկունները Միսաքը կը հրաւ իրէին իրենց քով։ Մեր անմահ Միսաքը չափագանց պատուախնդիր էր, ընդհանուրին պատիւին պաշտպանութեանը համար ամէն վտանգ աչքի կ'առնէը։ Ահա այսպէս Ատանացիք ընդհանրապէս իրենց ծակտին քրտինքովը հանգիստ ու կանոնաւոր կեանք մը կը վայելէին։

ՀՆԿԵՐԱՑԻՆ ՎԻՃԱԿ

Ատանա՝ Պոլսեցւոց կարծածին պէս գաւառի մութանկիւն մը չէր երբեք, վերջին տարիներս չնորհիւ կրթութեան և օտարներու ներկայութեան կատարեալ լուսաւորեալ և զարգացեալ քաղաք մը եղած էր։ Հայերը լոկ թրքախօս էին, սակայն այս ալ տարուէ տարի կ'անհետանար չնորհիւ Հայախօս պանզուխտներու և վարժարանաց։ Զարգացեալ, ուսեալ և լեզուագէտ

երիտասարդները բազմաթիւ էին, որոնք կը հասնէին Ատանայի նախկին Արգարեան և ետքը Մուշեղեան վարժարանին ու Տարտոնի Գոլէճին և Ատանայի Յիսունեանց տուած կրթութեանցը շնորհիւ։ Հայոց ընկերական վիճակը շաա նախանձելի էր։ Աժառը այգիներուն մէջ (^{*}) և ձմեռուան երկար գիշելները մհծամիծ հաճոյքներ ու ինչոյքներ կը վայելէին։ Ատանայի ժողովուրդը շատ զուարձաւէր էր պատուոյ սահմանին մէջ։ Ամէն տուն իր նուագը ունէր, երիտասարդները չափազանց նուագասէր էին, պղտիկ տարիքէ կ'ոկուէին նուագի մը դաս առնել, որով ամէն Երիկուն և կիրակի ցորեկները տուներաւն մէջ դեռահաս պատանիներ և երիտասարդներ նուագներու տեսակներ միացուցած կը նուագէին ու կ'երգէին զմայլելիօրէն։ Գլխաւոր նուագներն էին, ուտ (արաբական), ջութակ, մանտոլին, որինք ևայլն և երբեմն տուներ գաշնակ, որոնք միացած ներգաշնակ եղանակներով կը վերացնէին ունկնդիրները։ Ասոնցմէ զատ ամարեօն բազմաթիւ պատանի և երիտասարդներէ կազմուած էր երկու օրկիսրա խումբեր, առաջնորդութեամբ Ատանայի ձայնագրութեան երկու ուսուցիչներէն Մահսերո Պոլսեցի Վարպետի (Վրդանէս Էսմէրեան) և Ալիքսան էֆ. Զէօրէկճեանի, որոնց կազմած խումբերը կը մրցէին իրարու հետ, հետզհետէ աւելի կատարելագործեալ ներկայանալով հանրու-

(*) Ատանացւոց այգիի կեանքը իրաւամբ սքանչելի էր, իրիկունները սեղացի վաճառականներն ու արհեստաւորներն տասնեակ կառքերու մէջ բազմած եւ հարիւրաւոր ժիերու եւ ջորիներու վրայ նստած, ուրախ գուարթ կը վազէին կ'երթային իրենց այգիներն եւ առտուն կանուխէն կը դառնային իրենց զործին զլուխը միեւնոյն զուարթութեամբ։

թեան։ Գալով թատրոններու, ամբողջ Պոլսոյ մէջ եթեան կամ չորս թատերախումբ կը գործէ միշտ, մինչդեք կամ չորս թատերախումբ կը գործէ միշտ եղող Ստանայի մէջ գեռ հաղիւ Գատըզիւղի չափ միծ եղող Ստանայի մէջ շատ անգամ երեք չորս թատերական ընկերութիւններ ներկայացումներ կուտային ահագին գումարներ շահելով։ Ասոնցմէ դուրս Սահմանադրութենէն ետքը շահելով։ Ասոնցմէ դուրս Սահմանադրութենէն երիտասարդկազմուեցաւ ամարեօն Հայ և Թուրք երիտասարդներու խումբ մը, որ միայն բարենպատակ հաստատութիւններու ի նպաստ ներկայացումներ կուտար։

Ատանայի մէջ շատ գտնաւազներէն մէկն ալ գինեատունն էր։ Ամէն թաղ իր գինետունները ունէր, մանաւանդ կեդրոնն էր Գօնտուրաճըլարի շուկան, զորայրեցին ու քանդեցին ամբողջապէս շրջակայ տուներով, եկեղեցիներով ու վարժարաններով։





Բ. ՄԱՍ

ԱՏԱՆԱՅԻ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՊՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Ամուսնական պայմանները Պոլսոյ հակառակն էր։
Պոլսոցի երիտասարդներէն ոմանք՝ կեանքի ընկեր
առնելիք օրիորդէն իբրեւ առաջին ձիրք գրամօժիտ
կը պահանջեն, իսկ Աստանացի երիտասարդը ընդհա-
հակառակը ինք գրամօժիտ կը վճարէ աղջկան։ Ա-
մենէն հարուստէն մինչեւ յետին մուրացիկը ամուս-
նութեան ձեռնարկած ատեն պարտաւոր է պատրաստ
ունենալ աստիճանաբար ապարանջան՝ ոսկի կամ ար-
ծաթ, օղ, ժամացոյց, հինգ մէկնոց ոսկի, պուշ և շա-
րունակելի իր հարստութեան համեմատ։ Կնօջ թեւին
վրայ գտնուած ոսկի ապարանջան (պուրմա) և ուրիշ
զարդուկիներէն կը հասկցուէր պատկանած ընտանի-
քին հարստութեան աստիճանը, որով Աստանայի կի-
ներէն շատերը իրենց ամուսինէն աւելի հարուստ
կ'ըլլացին. (երա՞նի թէ այդպէս չըլլար և հիմա գո-
ղերու կոկորդը չանցնէր . . .)։ Շատ կիներ, երիտա-
սարդ և տարիքու, իրենց թեւերուն վրայ կը կրէին
5—6 զոյտ հաստ պուրմա ոսկի ապարանջաններ (ո-
րմացմէ մէկ զոյտը միայն 20—30 ոսկի է)։ Աղջիկ մը

հինգ տարեկանէն կ'սկսէր ոսկի զարդերով զարդար-
ուիլ հօրը կողմէ և վերջն ալ ամուսնոյն նուերներն
ալ վրան աւելնալով ոսկիներու ծանր բեռի մը տակ
կը մնար և այդ բեռին ծանրութեան աստիճանով
խրոխա ու հապարտ կ'ըլլար Օրիորդը կամ Տիկինը։

Ամուսնութեան հանդէսները Աստանայի մէջ խիստ
փայլուն կ'ըլլար և մեծամեծ ծախքերու դուռ կը
բանար, այնպէս որ ամուսնանալու պատրաստուող ե-
րիտասարդ մը ապագայ ապրուստէն աւելի հարստինա-
կան ծախքերը կը մտածէր և որով շատեր հարստնե-
կան ծախքերու չափազանցութենէն չէին կրնար ա-
մուսնանալ։ Բարեբաղդաբար վերջին տարիներս, շը-
նորհիւ ծ. Մուշեղ Սրբազնի ջանքերուն, ծախքերն
բաւական թեթեւցած էին։

ՆՇԱՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Աստանայի երիտասարդ այրերն սովորաբար քսան
և հինգէն երեսուն, իսկ աղջիկներն տասնեւութէն
քսանեհինգ տարեկանին մէջ կ'ամուսնանան։

Ամուսնութեան տարիքը հասած երիտասարդի մը
նշանախօսութիւնը ծնողքը կ'որոշէ և երիտասարդին
կամքը կ'ուզէ յարմար ազգական կամ բարեկամի մը
միջոցաւ։ Երիտասարդին հաւանութիւնը առնելէ ետ-
քը, մայրը կ'ընտրէ աղջիկը և իր ամուսնոյն կը հա-
զորդէ, հայրը իր մասին աղջկան ձիրքերէն աւելի հօ-
րը կամ ազգականներուն յատկութիւնները նկատի
կ'առնէ և որոշումը տրուելէ ետքը երիտասարդին կը
հաղորդուի կրկին նոյն ազգականին միջոցաւ։ Երի-
տասարդը՝ իր ծնողացը յարմար գտատածին համար
ընդհանրապէս, մեծ «Այո»ն կ'ըսէ և անմիջապէս նշանի

պատրաստութեան կը ձեռնարկուի : Իրենց կարողութեան համեմատ ապարանջան, օղ և այլն պատրաստուելէ ետքը, ազգական կամ բարեկամ մէկ երկու մարդիկ ազգան հօրը քովը կը դրկուի «խօսք կապի» : Աղջկան հայրը արգէն կռահած անցուգարձը և եկողներուն նպատակը, կատարեալ անտարբերութիւն մը ցոյց կուտայ : Զարմանքով և բռնի տիբութիւնով մտիկ կ'ընէ յանձնակատարներուն առաջարկը և առանց տատամանելու, անմիջապէս աղջկան պատիկութիւնը մէջ բերելով առաջարկը կը մերժէ, ինքզինքը միշտ ծանրէն ծախսելով : Եւ վերջապէս եկողներն կ'աղաչեն որ գոնէ մտածելու խօսք տայ և «մտածելու» խօսքն առնելով կուտան : Մէկ երկու օր ետքը նորէն միեւնոյն մարդիկը և քահանայ մը մատանի մը առնելով կ'երթան և հիւսիսէն ու հարաւէն խօսելէ ետքը, խօսքը կը բերեն նպատակին և նորէն աղջկան հայրը շատ հազով նապերէ ետքը, քահանան ուստքի կ'ելլէ և աղջիկը ներս կանչելով «Պահպանիք» ը կ'ըսէ ու մատանին կանցունէ ազգան մատը : Հետեւ եալ իրիկունը երիտասարդին ամբողջ ծանօթներն ու ազգականները հրաւիրուելով «Հէրպէթ խմելու» կամ «շաքար ուտելու» կ'երթան աղջկան տունը մօտ աղջկաններն իրենց հետ առնելով արժէքաւոր նուէլը ներ : Աղջկան առւնէն վերագառնալով երիտասարդին տունը կուգան, ուր զուարճութիւններ ու խրախճանութիւններ կը կատարուին : Հին սովորութեամբ մինչեւ պակին օրը նշանուած տղան՝ չէր կրնար տեսնել իր նշանածին երեսը և սակայն հիմա ամենէն առաջ տղան կը տեսնէր . . . :



Ատանայի մէջ նշանախօսութեան և պատկի մէջ շատ կարճ միջոց մը կը թողուն : Նշանախօսութենէն մինչեւ ութ օր կամ շատ, շատ, տառնեհինդ օրէն պատկը կը կատարուի : Աղջկան օժիաներն արգէն շատերուն պատրաստ կ'ըլլայ, տեղական սովորութեամբ 5-10 ձեռք զգեստ, մեծ հայելի, գարակ, անկողին, գորգ ևն . , որոնք պատկէն օր մ'առաջ փառաւոր կառքերավ կը զրկուին երիտասարդին տունը :

Պահները ընդհանրապէս երկուշաբթի և քիչ անգամ Հինգշաբթի օրերը կը կատարուին։ Պահի օրը առաջաւ երիտասարդին քոյրը և կամ ազգական հարսեր ու աղջիկներ հարսի զգեստն առնելով կ'երթան հարսնցուին տունը «մազերը հիւսելու», ուր հարսնցուն մէջտեղ բերելով, երգերավ կը գովեն ու կը յուղեն աղջիկը և կը հիւսեն մազերը։ Նոր հարսի զգեստըն հագցնելով ամուսնութեան քոյլը կը նետեն գլուխը եւ ուրախ զուարթ կը վերադառնան տուն, աւետելով հարսին պատրաստ ըլլալն։ Կէս օրուան մօտ փեսացուն, ամուրի երիտասարդներ շըրջապատած, զգեստը կը հագցունեն երգերով և հազար ու մէկ զուարձաբանութիւններով, որուն միջոցին ամուսնացեալներուն համար արգիլեալ է փեսին սենեակը մտնել։ «Խորհուրդ խորհին» երգելով փեսան կը բերեն քահանային առջեւ և օրհնութեաններով կը ճագուեցնեն փեսութեան զգեստը։

Կէս-օրին արդէն հրաւիրեալներն հասած ճամբայ
կ'ելլեն երթալու համար հարսին տունը։ Ժամանակին
այլազան նուազներով և աղմուկներով կ'երթային,


սակայն վերջին տարիներս նուագի ներկայութիւնն ըրլորովին արգիլուեցաւ, Առաջնորդարանի կողմէ: Իսկ վերջերս հարսնական թափորն փողոցներէն կ'անցնէր լուս ու մունջ: Հարսնցուին տունը մի քանի վայրկեան սպասելով սուրճ մը խմելէ ետքը հարսը կ'առնեն և հարսին քոյրերը կամ ազգականները թեւերը մտած փեսին ետեւէն կ'առաջնորդեն պատկանած եկեղեցին, ուր արդէն քահանաներն զգեստաւորեալ պատրաստ կ'սպասին և որով անմիջապէս կը կատարուի Ա. Պատկի արարողութիւնը: Շատ անգամներ տասնեակներով պատկաներ իրարու քոյլ կեցած մէկ աղօթքով կը կատարուին՝ ազատելով քահանաները երկար յոգնութիւններէ . . . : Եկեղեցին վերջը հարսին թեւը կը մտնէ երիտասարդին քոյրը կամ մօտ մէկ աղգականուշին և կամ օրուան նորութեան հետեւողները՝ փեսին թեւը կուտան նորապսակ հարսը և թափորը կ'առաջնորդուի փեսին տունը: Թափորին փողոցներէն անցած ատեն, փեսին ծանօթներուն կողմէ մեծամեծ պատիւներ կը շռայլուին, հոտեղէններ դրամներ և շաքարներ սփռուելով: Իսկ ջրկիր թուրք և հայ լոձեր շահու համար ջուրի կոյժեր կը կոտրեն փեսին ոտքին տակ, պատալով «Ալլահ խալլըլլ էլլէսին, կէօրնեպ կէօրէձէկին պու օլսուն»: Ասոր փոխարէն փեսին պարագաներուն կողմէ կը վճարուի դրամական նուէքրներ: Փեսին դրան առջեւ ևս մասվածաներու կամ հարսնետան կողմէ նոր հարս ու փեսին ոտքերուն տակ կը մորթուի մատաղ ոչխարներ և կը բաշխուի աղքատներու: Հրաւիրեաներուն իրբեւ պատիւ կը բաշխուի գոյնզգոյն ծրարիկներով շաքարներ, որոնք առնելէ վերջ իրենց բաժինները կը շնորհաւորեն հարսնետէրը և նոր

փեսան, կրկնելով միշտ «կէօրիւպ կէօրէձէկին պու օլսուն»—«Տեսած և տեսնելիքդ այս ըլլայ»ի բանաձեռ և կը մեկնին: Իրիկուան դէմ փեսին կողմէ ձմեռուկ մը կը դրկուի աղջկան ծնողքին տունը իրբեւ հրաւէր, որուն ի պատասխան փեսին տունը կուգան նոր հարսին եղբայրը և ուրիշ ազգական երիտասարդներ պըտուղներով բեռցուած, որոնք ևս բաւական զուարձութիւններ վայելելէ ետքը «Տեսած և տեսնելիքդ այս ըլլայ» բանաձեւի մաղթանքներով կը մեկնին:

Հարսնեթքէն ութ օր ետքը տեղական բասով «Գարշը փաղար»ի շնորհաւորութեան կուգան աղջկան ծընողքն ու ազգականները հարսնետունը, ուր երիտասարդին ալ աղգականները հրաւէրուելով զուարձութիւններ ու կերուխումներ կը կատարուին: Ասկէ ութ օր ետքն ալ հարսը՝ ծնողքին տունը կը տանին, հոն եւս բաւական կերուխումներէ ետքը հարսն ու փեսան տուն կ'առնեն և մի քանի օր մնալէ ետքը թէ նոր փեսան և թէ հարսը նորանոր նուէքրներ առած, փեսին ոսկի ժամացոց և հարսին արժէքաւոր անօթ մը տրուած կը դառնան իրենց տունը և կը նետուին կեանքի պայքարին ասպարէզը:

Ատանայի տեղական կարգ մը աւանդական սովորութիւններէն առ այժմ կարեւորն՝ միայն ամուսնութիւնը նկարագրելով կ'անցնիմ աւելի կարեւոր խընդիրներու:





Գ. ՄԱՍ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԻՃՈՒԿ

Ատանայի Հայութիւնը հակառակ թրքախօսութեանը սկիզբէն ի վեր միշտ ջերմեռանդ և թռւնդ եկեղեցաւէր եղած է։ Եկեղեցիին անունով պահանձուած գումարներն ամենայն սիրով կը վճարէին։

Ատանայի մէջ Հայ Եկեղեցիին պաշտպանութեան և յառաջիմութեանը համար ասենամեծ ծառայութիւններ մատուցանողն եղած է Պատիկեան ազնուատում գերգաստանը, որուն թոռներուն կազմած բազմաճիւղ լնտանիքներն մինչեւ ալոօր հոգի կուտան իրենց Եկեղեցիին պաշտպանութեանն ու լուսաւորութեանը համար։

Երեսուն երեք տարուան Համիտեան քաղաքականութեան ի գործ դրած Հայասպան հալածանքներն շատ մեծ յուստատութեան մատնեցին՝ ուրիշ տեղերու պէս Ատանային ալ Հայութիւնը։ Եւ ասոր հակառակ կաթոլիկ և Յողոքական Եկեղեցիներուն վայելած օտարի ազգեցութեամբ տուանձնաշնորհումներն պահ մը շացուցին ու մազնիսեցին շատ մը Հայեր և սակայն քսան տարի տուածուան տիպար Առաջնորդն Գեր։ Տ. Մկրտիչ Արք. Վեհապետեանը մեծ գործունէութիւն ցոյց տուած էր այլակրօնութեան հոսանքին դէմ։

այլ աւալ այն ատենուան բոնապետական կառավարութեան գարձուցած սագայելական էնթրիկներովն ակամայ հեռացուեցաւ իւեղձ Սրբազնութեանը և որով Ատանացիք զրկուեցան իրհնց պաշտելի Առաջնորդէն։ Ասոր յաջորդեց Մարտացին Տ. Խաչատուր Ծ. վարդապետն որ մի քանի տարի ըստ կարուութեան ծառայելէ ետքը չի կրցաւ կառավարութեան հետ համաձայնիւ և առ ալ ստիպուեցաւ հեռանալ։

Կիլիկիոյ կաթողիկոսական կրկնակի ընտրութիւններուն Ատանայի մէջ կատարուիլը, ի վերջոյ Ն. Ս. Օծութեան Տ. Սահակ կաթողիկոսի ընտրութիւնը և մեծամեծ հանգէսներով Ատանա մուտքը և Ն. Ս. Օծութեան այն ատեն ցոյց տուած գործունէութիւնները հրապուեցան Եկեղեցւոյ շուրջը ու պինդ կերպով յարեցան ու փարեցան իրենց Մարտինի Եկեղեցիին։

Քիչ ետքը Առաջնորդ ընտրուեցաւ Արմաշի փառքերէն Տ. Մուշեղ Եպիսկ. Սերովիկեան, որն որ շատ կարձ միջոցի մը մէջ իրականացուց իր մասին տածուած յուսերն։ Տ. Մուշեղ Սրբազն երկաթէ կամքով և անգուլ ջանքով կուրծք տուաւ ամէն տեսակ գլժուարութեանց։ Մանաւանդ նոյն ատենուան բոնակալ կուտակալ Պահրի փաշայի հետ ունեցած չափազանց մտերմութիւններն, ա'լ աւելի ասպարէզ տուին արձակ համարձակ շարժելու, որով մեծ ազգեցութեան տիրացած էր մեր տիպար Առաջնորդը։ Անշուշտ Առաջնորդին ազգեցութեանը համեմատ Հայ ժողովուրդին պատիւն ալ բարձրացած էր։

Տ. Մուշեղ Սրբազն թէև քիչ մը խիզախ, սակայն շատ մեծ կարողութիւն ցոյց տուաւ Ատանայի Առաջնորդութեան պաշտօնին մէջ։ Խօսեցաւ, խրա-

տեց, սաստեց, յանդիմանեց, պոռաց, կանչուըռտեց, գանձեց, ծախսեց, շինեց շտկուտեց և կանգնեց Ազգ։ հսկայ կալուտածներ։ Կատարեալ յաջողութեամբ կազմակերպեց, հոգի տուաւ և կանոնաւոր շաւղի մը մէջ դրաւ Եկեղեց։ ու Կրթական գործերն Վերջապէս մէկ խօսքով ըրաւ ինչ որ կարելի էր։ Եւ այս զիրքով Բողոքական ու Կաթոլիկ Հայերն կը նախանձէին հարազատ Հայերու վիճակին և նոյն իսկ շատեր Մայրենի Եկեղեցւոյ գիրկը վերադառնալ կը մտածէին, ինչպէս ոմանք դարձան։

Տ. Մուշեղ Սրբազան չքնաղ կարողութեամբ մը յաջողեցաւ հասութաբեր կալուտածներ շինելի նպաստ Եկեղեցւոյ։ Պաշտօնավարութեան առաջին տարին իսկ հանգանակութեան ձեռնարկելով աներեւակայելի յաջողութեամբ մէծ գումար մը ձեռք ձգեց և անմիջապէս մի քանի կարեւոր կալուտածներու շինութեան ձեռնարկեց։ Քաղաքին կեդրոնը և Սրգարեան Վարդարանին քովը գտնուող Հայոց հին և անպէտ Գերեզմանատունը երկուքի բաժնելով մէջտեղէն ճամբար մը անցուց, ճամբուն երկու կողմը խանութներ շարեց և որոնց վրայ գէմ առ գէմ ու կամուրջով մը իրարու միացած հսկայ վարժարան մը բարձրացուց, որ պիտի ըլլար «Կիլիկեան Գիշերօթիկ Վարժարան»ը։

Այս միջոցին էր որ տեղացի Թուրքերը դժուարութիւններ հանել ուզեցին. պահ մը գերեզմաննոցին տէր եղան և վերջն առ Երլորդ հեռագրեցին որ «առանց արտօնութեան վարժարաններ կը շինուին»։ Սակայն Տ. Մուշեղ Սրբազան յաղթեց այս ամենուն շնորհիւ Պահրի փաշացի հետ ունեցած սերտ յարաբերութեանց։ Վերջապէս սոյն հսկայ շէնքերուն ծախքէն բացուած ահագին գումարներն ալ հանգանակու-

թեամբ վճարեց և քիչ մաս մը բաց մնաց։ Նոյնպէս Սրգարեան վարժարանի խարխուլ շէնքը փլցունելով քիչ անդին կառուցանել տուաւ նորածե երկրորդ վարժարան մը։ Այսպէս Եկեղեցին օժտուեցաւ մեծամեծ շէնքերով ու կալուտածներով և որոնց աստիճանով բարձրացաւ Ազգին պատիւն ու վարկը։ Այս վիճակներով Ատանայի մեր Եկեղեցական վիճակը շատ փայլուն և նախանձելի էր չուրհիւ Տ. Մուշեղ Սրբազնի ջանքերուն։

Ատանա ունէր երկու Եկեղեցի, Մայր Եկեղեցի և Ա. Ստեփանոս։ Մայր Եկեղեցւոյ բակին մէջ կը գըտնուի Ազգ։ Առաջնորդարանը և Արամեան Մանկապարտէզը, որոնք բարեբախտաբար ազատեցան հըրգեհներէն։ իսկ Ա. Ստեփանոս Եկեղեցին որ Պատիկեան մէծ գերգաստանին ծախքովը շինուած էր և որուն բակին մէջ կը գտնուէին աղջկանց Աշխէնեան գէմ առ գէմ զսյզ վարժարանները, ամբողջովին այրեցան ու աւերակ դարձան, որոնց մէջտեղը գտնուող և հրաշքով ազատող վերապրողներէն մէկն ալ այս տողերը գրողն է։

Ատանայի մօտակայ գիւղերէն Հայ-գիւղ և ինձիրմեք գիւղի մէջ ևս կը գտնուէր Եկեղեցի և քահանաներ, որոնք ամբողջապէս այրուեցան ու քանդուեցան։ Ատանայի Եկեղեցիներն ունէին տասնի չափ քահանաներ. Տ. Յակոբ, Տ. Գրիգոր, Տ. Եղիկ, Տ. Աբրահամ, Տ. Արսէն, Տ. Կարապետ, Տ. Գէորգ, Տասնեակ մը ժամանէիր և լուսարարներ, ևայլն։

Վերջերս Տ. Մուշեղ Սրբազան շինել պիտի տար Ազգ։ Առաջնորդարանը, այլ աւազ զուրն ինկաւ ամէն բան . . . :

ԱՐԹԱԿԱՆ ՎԱՀԱՆԻ

Աստանացի կրթական վիճակը քասան տարիէ ի վեր կանոնաւոր շաւղի մը մէջ կ'ընթանար : Արգարեան վարժարանին կանոնաւոր ընթացք մը տուող եւ գրեթէ կեդրոնական վարժարանի աստիճանին մօտեցը նողն եղած էր բարեյիշատակ հանգուցեալ ուսուցիչ Արդիս էֆ . Գաղանձեան , զոր գժբախտաբար երիտասարդ տարիքին մէջ թռքախտը խլեց Աստանացւոց ձեռքէն , որուն յաջորդեց Այնթապղի Թաթուլ Էֆէնտի , որուն տնօրէնութեանը միջոցին աշակերտած էի Արգարեան վարժարանին : Ասոնցմէ վերջ հետփհետէ տնօրինութեան կաչուեցան ծանօթ ուսուցիչ Համբարձուռ Ամառունի էֆ . որ վերջը Տ . Մեսրովայ վարդապետ ձեռնադրուեցաւ եւ Սիսի Աթոռին միաբաններէն ու Ֆէքէյի մինակեացն է , կեսարացի Տէր և Տիկին Յովհաննէս էֆ . Գունտուրումեան , Պոլսեցի ծանօթ գրագէտ Տիբան Զրաքեան , Կ . Պոտիկեան եւ ամենէն վերջը Տ . Մուշեղ Սրբազնի հրամանով Պոլսէն բերուեցան Տէր և Տիկին Սրամ էֆ . Նիկողոսեան , որոնց պաշտօնը կիսկատար մնաց աղէտին հետեւանքով : Վերջին տարիներու մանչերու վարժարանին չափով աղջկանց Աշխէնեան վարժարանին ալ ոյժ կը տրուէր , կարգ մը վարժուէիներ և կարուէիներ բերուելով Պոլսէն : Ասոնցմէ զատ Տ . Մուշեղ Սրբազնի օրով կանոնաւոր երկսեռ մանկապարտէզ մը հաստատուեցաւ Արամեան վարժարանին մէջ , որուն համար ամենէն շատ աշխատողներն եղան

* Աստանայի կրթական գործին մէջ ամենէն շատ ծառայողներն եղած են տեղացի ուսուցիչներէն Վահան Քէշէկեան , Տիգրսն Պետրոսեան եւ Յակոբ Տ . Պողոսեան Էֆէնտիները .

Օրիորդ Շնորհիկ նշանեան (Տիկին Պաղս Եղիանեան) , և քոյրերը Օքք . Զապէլ և Խօժէն : Այսպէս կրթաշկան գործին բաւական մղում կը տրուէր . որուն շնորհիւ Աստանայի Հայութիւնը կարճ միջոցի մը մէջ մեծ յառաջադիմութիւններու արժանացաւ : Այս շրջանին պիտի բացուէր Կիլիկեան գիշերօթիկ վարժարանը նոր շէնքերուն մէջ , որոնք հիմա աւերակոյտ մ'են :

Աստանայի նախկին Արգարեան և վերջը Մուշեղեան , Աշխէնեան և Արամեան վարժարանները ունէին երկսեռ (200) երկու հազարի չափ ուսանողներ . եւ տարեկան պիւտձէն էր (1500) հազար հինգ հարիւր սոկի :

ՎԱՃԱՐԱԿԱՆԱԿԱՆ ՎԱՀԱՆ

Ատանա վաճառականութեան հազուագիւտ կեդրոն մ'էր : Վաճառականութիւնը գրեթէ Հայոց ձեռքն էր , մի քանի թուրք և Յոյն վաճառականներէ զատ մնացեալներն ամբողջութեամբ Հայ էին :

Ինչպէս ըսինք Ատանա երկրագործութեամբ փայլած և յառաջդիմած էր : Ատանայի գանձը Չուգուր Ովայի արգասաբեր հողն է : Ատանա կ'արտագրէ գլխաւորաբար բամպակ , չուշմա , ցորեն , գարի , շաքարեղէք . նարինջ ևն :

Ատանայի երկրագործները ժամանակին մեծ գըժուարութիւններով կը ծախսեն եղեր իրենց բերքերը , սակայն վերջերս բոլորովին հակառակն էր , Եւրոպական տուներ մանաւանդ Գերմանացիներ՝ մասնածիւղեր հաստատած էին Ատանայի մէջ , որոնք երկրագործներ մէջտեղ չեկածէն հինգ վեց ամիս առաջ ծախու կ'առնէին (ալավերա) և մեծամեծ

գումարներ կը վճարէին երկրագործներուն, որով ժողովուրդը գրամական անձկութենէ չէր նեղուէր:

Ատանայի վաճառաշահութիւնը տեսնելով Եւրոպական մեծամեծ տուններ հետզհետէ ճիւղեր ու գործակալութիւններ կը հաստատէին և որով Ատանա եղած էր երկրորդ Եզիպտոս մը: Ամէն ասպարէզ դիւրութիւններ կը վայելէր Եւրոպական սրամութեան չնորհիւ, երկրագործը կ'ստանար տարուէ տարի նորահար մեքենաներ, հարիւրաւոր պաթէօզներ (Battue) ևն. որոնց լուծայած դիւրութեանց չնորհիւ հետըզհետէ կը կազմուէր նորանոր չիֆրիիներ: Վերջին տարիներս մէկ քանի Եւրոպացիներ և Եզիպտուցիներ ալ Ատանա գալով չիֆրիիներ գնեցին և երկրագործութեան սկսան, կազմելով ամէն կերպով կատարելագործեալ չիֆրիիներ: Ահա այսպէս Ատանայի վաճառականութեան բուն աղբիւրը եղող երկրագործութիւնն օրէ օր կը գարգանար և հսկայ քայլեր կ'առնէր և երկիրն ալ կը յառաջադիմէր նոյն աստիճանով:

Եւրոպական տուններու տնօրէններ և գործակալներ ամէն կարգի արհեստաւորի և կամ վաճառականի ոտքը գալով յանձնարարութիւններ կ'առնէին, միշտ իրարմէ աւելի մեծ դիւրութիւններով:

Թուրքիոյ մէջ ճիւղ բանալու որոշում տուող Եւրոպական տունները Պոլիսէն ետքը կը բանային Ատանա: Շահու համար Թուրքիա պտղատի ելլող գործարանատէր (Fabricateur) կամ մեծ հաստատութեան մը տէրը կամ տնօրէնը կուգար ուղղակի Ատանա:

Ատանայի մէջ կը գտնուէր (26) քսանեվեցի չափ թիշկ եւ (13) տասներեք գեղագործներ: Ասոնցմէ զատ կը գտնուէին բաղմաթիւ արհեստաւորներ. ուսկերիչ, մուճակագործ, կօշկակար, պղնձագործ ևն.

որոնց ամինքն ալ իրենց յատուկ մասնաւոր շուկաներն ունէին: Արտածումին բաղդատմամբ մեծաքանակ ներածում կ'ըլլար Եւրոպաէն ամէն տեսակ ապանքներէ:

Վերջապէս երկրի մը յառաջդիմութեան առաջին ազդակն եղող վաճառականութեան աստիճանը շատ բարձր և նախանձելի վիճակի մը հասած էր չնորհիւ Հայոց անխոնջ ջանքերուն:





Դ. ՄԱՍ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵՆՔՆ Ա. Ռ. Ա. Զ

ՀԱՅՈՒ ՀԱԼԱԾԱՆՔ

Սահմանադրութենքն առաջ քսանեհինք տարիներէ ի վեր Հայերու մասին բնական գարձած հալածանքը, կիլիկիոյ մէջ ևս կատարեալ խոտութեամք ի գործ կը գրուէր։ Քաղաքական խնդիրներով զրպարտութիւններն ու իխպարներն առվորութեան կարգ անցած էին։ Կիլիկիոյ գաւառներուն մէջ բանտարկուած Հայերուն $\frac{9}{10}$ մասը քաղաքական յանցանքով կ'ամբաստանուէին։ Ամէն տարի մի քանի անգամներ Հաճնէն, Զէյթունէն, Մարտէն, Տէօրթ-եօլէն, Սիսէն և Ատանայէն հարիւրաւոր Հայեր կը բանտարկուէին միայն Հայութեան յանցանքով։

Կաշառակեր կուսականերու, կառավարիչներու, տեղակալներու և գատաւորներու գրամագլուխն էր միայն և միմիայն քաղաքական զրպարտութիւնները, որուն չնորհիւ կը կողոպտէին գժբաղդ Հայերը։ Խսկ դրամ չունեցողներն՝ անխղճարար գատապարտուելով կը հիւծէին տարիներով բանտերու խորերը և

վերջն ալ օրուան պատրիարքին միջնորդութեամբը ներում կը չնորհուէր ասոնցմէ ումանց, Բռնապետութեան կերպոնէն՝ Ելլուզէն

Ատանայի ժաղովաւրգն ալ հակառակ թրքախօսութեանն ու այն տահնուան անտարբերութեանը. շատ անգամներ կ'ենթարկուէին միւս գաւառներու հայութեանց րախտին։ Եւ սակայն կը խոստովանինք թէ վերջին կուսակալ Պահրի փաշացի տասն երկու տարուան պաշտօնավարութեանը միջոցին Ատանայի նահանգին մէջ քաղաքական բանտարկութիւններն եթէ չի գաղրեցան գոնէ թեթեցան, միայն թէ Պահրի փաշա չափէն աւելի կաշառակերութեամբն ընդհանուրին գժգոհութեանը առարկայ եղած էր։

Պահրի փաշա կաշառք կ'առնէր միայն ունեւորներէն, կը փեթթէր փետրաւորները, կարեւոր շահերէ, եկամուտներէ և հարուստներէ կ'սպասէր իր բաժինը մասսամբ զրկելու համար անշուշտ, իր վերին Հրամանատարին և ընկ.։ Պահրի փաշա քաջ գիտէր և համոզուած էր թէ, Հայերն՝ քաղաքական ամէն նպատակէ զերծ են և կ'ապրին կատարեալ հաւատարմութեամբ և որով վերէն եկած հրամաններուն շատ անգամներ առանց քննութեան կը պատախանէր և կը վստահեցնէր և որով Ատանայի շրջականները պահ մը ազատած էին կարգ մը անգութ հալածանքներէ։ Միայն թէ Պահրի փաշա Պոլսոյ պատասխանը տաէ ետքը ամբաստաննեալը կը նեղէր և կ'աշխատէր որ ազատութեանը համար նիւթական փոխարինութիւն մը ըլլայ, եթէ կարենար փրցունել կ'առնէր իսկ հակառակ պարագային քիչ մը քաշքելէ ետքը կ'արձակէր. ահա Պահրի փաշացի ամբողջ հոգեբանութիւնը: Քիւրտ Պահրի փաշա լեռնական հակայ մարմ-

նոյն և հակառակ տգիտութեանը, հազուագիւտ քաղաքագիտութեամբը մէկ կողմէ կը դողացնէր Ատանան ու շրջակաները և միւս կողմէ կատարեալ վըստահութիւնը կը վայելէր եըլուզզի: Եւ այսպէս իր չորս զաւակներովն ու բազմաթիւ հետեւորդներովն արքայավայել կեանք մը կը վարէր Ատանայի մէջ:

Ատանայի առաջնորդ ընտրուեցաւ եւ եկաւ Տ. Մուշեղ փարզապետ որ վերջը ձեռնադրուեցաւ եպիսկոպոս: Մուշեղ Սրբազան շատ կարճ ժամանակի մը մէջ յաջողեցաւ Պահրի փաշայի կատարեալ համակրութիւնը և վստահութիւնը շահիլ: Ասոնց մտերմութիւնը այն աստիճան սերա եղաւ որ թուրքերն անգամ ստիպուեցան «Առաջնորդ էֆ.»ին դիմել իրենց մասին Պահրի փաշայի բարեխօսելու համար: Մուշեղ Սրբազանի խօսք տուածը Պահրի փաշայէն ընդունուած կը համարուէր և որով Մուշեղ Սրբազան Ազգային շրջանակներէ գուրս կառավարութեան դուռըն ալ մեծ պատիւներ կը վայելէր և Հայերուն փարկն ու վստահութիւնն ալ նոյն աստիճան բարձրացած էր: Նոյն բարեոք և մտերմական յարաբերութեանց չնորհիւ կարուցուեցաւ Ատանայի Հայոց շուկան, փարժարանները և շրջակայ գիւղերուն և քաղաքներուն մէջ մի քանի կարեւոր եկեղեցի և փարժարաններ:

Տ. Մուշեղ Սրբազան ոչ միայն Հայութեան այլեւ ամբողջ Ատանայի համար յառաջդիմութեան փարոս մը եղած էր, որուն ցուլացուցած լոյսերովն լուսաւորուեցաւ և ա՛լ աւելի փայլելու վրայ էին Ատանայի և շրջակայից ամէնէն մութ անկիւնները: Ատանայի Հայութեան մեծամասնութենէն զատ թուրքերն անգամ մեծ օգուտներ տեսան Տ. Մուշեղ Սրբազանի

ներկայութենէն և միայն մոլեռանդ Հայատեաց գասաւկարգն էր որ կատէր ու կը չարախօսէր, պատճառ բռնելով Պահրի փաշայի պէս կաշառամոլի մը հետունեցած չափազանց մտերմութիւնը: Միւս կողմէ Պահրի փաշային ետեւէն ալ բամբասելով բերնէ բերան կ'ստիպէին որ Հայոց Առաջնորդին հետ մէջերնին գոյացած մտերմութիւնին պաղի և սակայն ընդհակառակութիւնը առէ օր, տարուէ տարի: Եւ այսպէս Մուշեղ Սրբազանի՝ հակառակ իր խիզախ բնաւորութեանը և աննշան թերութեանցը Պահրի փաշայի հետ ունեցած մտերմութեանը չնորհիւ Ատանայի Հայութեան ամէն գործերը արդարութեան և հաւասարութեան շաւզին մէջ կ'ընթանար Սահմանադրութենէն շատ առաջ:

ՀԱՅ ԵՒ ԹՈՒՐՔ ՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ատանայի հայ և թուրք ժողովուրդներն տարիներէ ի վեր իրեւ եղբայր ապրած էին և շատ մօտէն գրեթէ առանց ազգի խարութեան կը կենակցէին ու կը փարուէին իրարու հետ: Նոյնիսկ 1895ի Հայկական չարդէն Ատանան ազատ և անվեսա մնաց, չնորհիւ տեղացի մի քանի ազգեցիկ թուրք երեւելիներու և աւելի հիշգը Հայ և թուրք անկեղծ մտերմութեանց: Այն ատենն՝ Ատանայի թուրքերն եթէ ուզէին մէկ ժամուան մէջ կրնային լափել Ատանայի Հայութիւնը, առանց ասիննափոքը ընդդիմութեան մը, սակայն նոյն ատենուան կուսակալին աչքրացութիւնը՝ տեղացի թուրք երեւելիներու, մանաւանդ Շէյխ Ղարիպ ղատէ Համբի ձէմալ էֆ. վի (որուն ազան ֆուտա էֆ. ն ալ այսօր Ատանայի ամէնէն լուսամիտ Հայասէրն է) ջանքերուն և տեղացի ժողովուրդին

անկեղծ մտերմութեանցը չնորհիւ Ատանան ազատած
էր 1895ի Հայկական ջարդէն։ Այն ատենը Ուրբաթ
օր մը միայն պղտիկ խլրտում մը եղաւ և սակայն
բարերադրաբար մէկ երկու զոհով խնդիրը փակուե-
ցաւ։ Իսկ եթէ Հաճընն ալ ազատութեան համար
Ունիոյ օրինակին հետեւէր շատ հաւանական էր թէ
Ատանան 1895ին տակնուվրայ ըլլար և հիմակուան
աղէտին պէտք չի տեսնուէր։

Ահա այսպէս Ատանայի հայ և թուրք յարաբերու-
թիւններն միշտ մտերմական և եղբայրական եղած են։
Միայն մէկ երկու բռնապետ թուրքեր ուզած են հա-
յութիւնը հալածել որոնք իրենց փափաքին չէին
կրցած արժանանալ։

Փոքր Ասիոյ շատ կողմերը թուրքերուն բերնին
ծամոցը եղող կեալը բառը Ատանայի մէջ գրեթէ
գոյութիւն չունէր և ընդհակառակը թուրքերը մեծ
յարգանքով կը վարուէին հայերուն հետ և փոխա-
գարձաբար։

Շատ անգամներ հայ և թուրք երիտասարդներուն
միասին պտըտիլը տեսնելով անկարելի կ'ըլլար իրար-
մէ զանազաննել, թէ՛ գէմքով, թէ՛ տարածով և թէ
վարուելակերպով իրարմէ բնաւ չէին տարբերէր.
անունով միայն կը յալտնուէին։ Եւ սակայն դժբախ-
տաբար 1895ի համիտեան ջարդէն ետքը կեսարիայէն
և ուրիշ տեղերէ Ատանա գաղթող և համիտի կամքին
հետեւող կարգ մը թալանի և ջարդի սիրահար մո-
լեռանդ թուրքեր չարփոխեցին Ատանայի տեղացի
թուրքերն ալ և ասոնք ալ կամաց կամաց սկան
թշնամիի աչքով նայիլ հայերուն։ Բայց Ատանայի
հայերն ամէն բան կ'սպասէին և միայն ասանկ վայ-
րագ ջարդ մը չէին սպասեր իրենց եղբայր կարծած

և օրորոցէն ի վեր միասին մեծցած հայրենակից թուր-
քերէն։ Զի հասկցուեցաւ թէ ուրկէ գրդուեցան։

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵՆԿՆ ԵՏՔԸ

1908 Յուլիս 10ի Մեծ Յեղափոխութեան լուրը
առաջին անգամ Ատանա հասաւ։ Այս աւետարերէն
երկու օր առաջ Ատանայէն Պոլիս մեկնած էր Առաջ-
նորդ Տ. Մուշեղ Սրբազն։ Բննապետութեան տակ
ճնշուած ու ճգնաւած Հայ ժողովուրդն արգէն վախկուտ
ու շրջահայեց, մի քանի օր ականջէ ականջ փոփսա-
լով անցուց, միշտ իրաբուէ խնդրելով օր գաղտնի մը-
նայ ըսուածը։ Շատերը երլուրզի մէկ խաղը կամ
փորձը նկատեցին և վերջապէս Պոլսական թերթերն
հասան և պարզեցին ամէն ինչ։ Այլեւս գաղտնիք չի
մնաց։ Առաջին ասպարէզ նետուողն եղաւ իհոան
Ֆիքրի։ Նախ՝ երկաթուղիավ Ատանայէն Տարսոն Մէր-
սինի այցելութիւն մը կատարուին որօշուեցաւ, ո-
րուն համար մէջտեղ իյնալով հանգանակութիւն կա-
տարեց որուն հաւասար չափով մասնակցեցան թէ
թուրք և թէ հայ երիտասարդները։

Ատանա-Տարսոն-Մէրսինի ճամբորդութիւնը կատար-
ուեցաւ մեծամեծ ցյցերով ու խրախճանութիւններով,
որոնց միջոցին «կեցցէ» ներու շարքերուն մէջ կը գոչէին
մեր թուրք եղբայրները «կեցցէն Հայերը», որուն կը
պատասխանուէր «կեցցէն Թուրքերը» և երկու կողմէ
ձայներն միանալով օդերը կը թնդացնէին «կեցցէն
Օսմանցիները»։ Մէրսինի մէջ քաղաքապետութեան
կողմէ պատրաստուած շքսուեղանին վրայ աղատա-
շունչ բանախօսութիւններ եղան թուրքերու և Հա-
յերու կողմէ։ Իրիկունը վերագարձին աննկարգգրելի

ցոյցերու մէջ ընդունուեցաւ և թափօր կազմուելով երգերով, «կեցցէ»ներով և անընդհատ ծափահարութիւններով ժողովուրդը կռուավարութեան պարտէզն առաջնորդուեցաւ ուր եկաւ նաև կռուակալն, հրամանատարն իրենց հետեւորդներով: Քաղաքապետութեան թատրոնին բնմին վրայ իհսան Ֆիքրի սոխակ մը դարձաւ, կարգ մը սովորական բանաձեւերէ ետքը կռւակալին և միւս պաշտօնեաներուն համար ընդհանուր ժողովուրդին հետ առաջարկեց որ Սահմանադրութեան պահպանման համար կռուակալը երդում ընէ: Խեղճ Պահրի փաշա դողդողալով երդումն ըստաւ, նոյնպէս միւս պաշտօնեաներն: Նոյն օրուան հանդէսին նկարագրութեանցը հետ չնորհաւորական հեռագիրներ տրուեցաւ Մ. Յ. Գօմիթէի Մանասթըրի, Սելանիկի և Պոլսոյ ճիւղերուն, որոնց տակ ստորագրեց Ատանայի ժողովուրդին կողմէ «իհսան Ֆիքրի»:

Սոյն հեռագիրներ երկրորդ օրը անմիջապէս չնորհակալութեան հեռագիր հաստաւ կեդրոնէն և կը յանձնարարուէր Գօմիթէին ճիւղ մը կազմել: Ասոր վրայ իհսան Ֆիքրի փայլեցաւ, ամէն մարգ սկսաւ իհսանի շուրջը գեղերիլ: Իհսանը պիտի կազմակերպէր իթթիհատին Ատանայի մասնաճիւղը:

Օրուան հերոսը իհսան Ֆիքրի՝ լաւագոյն առիթէն օգտուիլ ուզելով իր գլուխը ժողվեց իր նախիկին բարեկամներն և սկսան իթթիհատի կռուակցութեան անդամներ արձանագրել: Կռուավարական պաշտօնեան ամբողջութեամբ առահի գիմեցին արձանագրուելու, վերջապէս անդամներուն թիւը հարիւրի հասնելէ ետքը տասներկու անդամէ բաղկացեալ վարչական խորհուրդի մը ընտրութեան ձեռնարկուեցու, որոնց մէ հօթը թուրք, երեքը Հայ, մէկը Յոյն և մէկը Ա-

րապ պիտի ըլլար և ընտրուեցան քուէի կարգով իհսան Ֆիքրի, Տօքթ. Եշրէֆ Սիւլէյման (Առողջապահական քննիչ), Տօքթ. Ասըմ (Քաղաքապետութեան բժիշկ), Մուխթար Ֆիքրի և Պաղտատի Զատէ Ապտելլահաման (Ապտիւլ Գատիրի տղան) էֆէնտիները, երկու զինուրական երգեանը հարպ գոլ-աղասը կութֆի պէէ և հարիւրապիտ Ալի Ռուհի էֆ. Լուկ Հայերէն Ստեփան Պղտիկեան, փաստաբան Կէօկտէրէլեան կարապետ և Զալեան կարապետ էֆ. Ները, Յոյներէն փաստաբան Քիրեագօ և Արտապ քրիստոնեաներէն իլիաս Թիւրքմէն էֆէնտիները: Ասոնք անմիջապէս գործի ձեռնարկելով հարաժարեցուցին նախ կռուակալն Պահրի փաշան, որ պահ մը գիմագրեց և վերջը մնձ անպատութիւններով ու խայտառակութիւններով գննտուեցաւ Ատանայէն: Պաշտօնեաներ հարաժարեցուեցան ու նորեր գրուեցան և որով պահ մը տեղական կռուավարութիւնը իթթիհատի կռուակցութեան հրամաններուն կը հետեւէր կէտ առ կէտ: Իթթիհատի միւս անդամները շաբաթը մէկ անգամ երկուշաբթի օրերը կը գումարուէին և շրջակայ ճիւղերու ու կեղրոնական թղթակցութիւնները կը կարգացուէր և եղած գիտողութիւններն ու հարցապնդումներն կ'ունկնդրուէր: Շրջականներն ալ կազմակերպելու և նորանոր ճիւղեր հաստատելու համար երկու թուրք և մէկ Հայէ բաղկացեալ պատգամաւորներ դրկուեցան, որոնք կրակ ու բոց ժայթքող բանախօսութիւններով ազատութիւն և հաւասարութիւն քարոզած էին: Սոյն կրակոտ բանախօսութիւններն և մանաւանդ հաւասարութեան խօսքերը շատ գէշ տպաւորութիւն ըրած էին ումժիկ և տգէտ թուրք գիւղացիներուն վրայ, որոնց արձագանգը կը լսէինք այն ատեն գիւղերը և շրջակայ քաղաքները գտնուող Հայերէն:

ԱՏԱՆԱՅԻ ԹՈՒՐՔԵՐԻՆ ԼՐԱԳԻՐՆ ԵՐԵ

իհսան Ֆիքրի բնիկ իզմիտցի ըլլալով բուն անունով Ահմէտ Թօսուն, Սելանիկի Երկրագործական պաշտօնեայ եղած, ուրկէ Տիգրանակերտ աքսորուած և անկէ ալ Փայտոի բերզը փոխադրուած անցեան անժամոթ մէկն է: Իր թշնամի ազգակիցներն, անցեալինհամար շատ գէշ տեղեկութիւններ կուտան եւ ստկան քիչ շատ կրթութիւն ստացած, լեզուն բերնին մէջ դարձող, գրիչը թուղթին վրայ սահող և Փայտո աքսորուելովն ինքզինքը ազատական հռչակող երիտասարդ մըն է և որ Պահրի փաշայի միջոցաւ Փայտոէն ազատած և Ատանայի մէջ մեռած կալուածատէր հարուստ Մէննան պէյի աղջիկն առած կ'ապրէր: Իհսան Ֆիքրի Սահմանագրութենէն առաջ Արհետից Վարժարանին տնօրէն եղած էր ստկայն վերջը Սահմանագրութենէն քիչ առաջ պաշտօնանկ ըլլալով տեղն անցաւ Կէրկէրլի Զատէ Ալի էֆ.ն, որ մոլեսանդ Թուրք մըն է:

Ատանայի Իթթիհատի կեդրոնին ստացած կարեւորութենէն օգտուելու հետամուտ եղաւ իհսան Ֆիքրի: Առաջին օրէն սկսաւ հալածել իր նախոկին թշնամիներն, որոնց կարեւորագոյնն էր Կէրկէրլի Զատէ Ալի էֆէնտին: Իհսան Ֆիքրի՝ իր կարգ մը արբանեակներով կ'աշխատէր Իթթիհատի միջոցաւ տապալել և իրբեւ զեղծարար գտատապարտել տալ Կէրկէրլի Զատէն: Վերջինն ալ ունէր իր համախոններն, որոնք եւս սկսան բուռն ընդգիմութիւն մը ընել իհսան Ֆիքրիի, որուն համար կարգ մը անպատիւ ծանուցումներ փակցուցին շուկաները և վերջապէս Կէրկէրլի Զատէն անպարտ հռչակւեցաւ և իհսան Ֆիքրին բարկութենէն ինքզինքը կ'ուտէր:

Ատանայի Թօսունագրութենէն առաջ կը հրատարակուէր «Սիմակ» չոր ու ցամաք պաշտօնաթերթն, վերջը սկսան հրատարակուէլ «Խաւասուն Օրտու» զինուորական լուրջ թերթ արտօնատէր կրթեանը հարազ գօլ ազտար կութիքի պէկ, «Իրիտալ» խուժանաթերթ կամ ամբոխագր լրտղիր — արտօնատէր իհսան Ֆիքրի, «Ծինապէր Իթթիտալ» հակաիթիտալեան թերթ — արտօնատէր Ալի Խոմի էփ, «Չուզուր Օվա» շուքէն վախցող խեղճուկ թերթ — արտօնատէր Մահմատ ձելալէտափին էփ::

Թուրքերէն չորս թերթերէն զտա, Հայերուս մէջ ալ կիլիկեան մի քանի թերթերու պէտքը զգացուեցաւ: Որով «Ծաւրոս» անունով թերթի մը արտօնութեան համար ես զիմած էի Կուսակալութեան, որուն համար երաշխաւորի եւալին կարգ մը գժուարութիւններ հանեցին: Նոյնպէս Հ. Ռ. Ս. Կուսակցութեան կողմէ Պալոս էփ: Եղիսաեան զիմած էր «Կիլիկիա» անունով թերթի մը արտօնութեանը համար: և միւս կողմէ Տ. Մուշեղ Արրազանը ձեռնարկած էր տապարան մը բերել տալու, որոնք գժբախտարար ամրողնովին ջուրն ինկան:

Իհսան Ֆիքրի «Իթթիտալ» թերթին համար տպարան մըն ալ բերաւ Պոլիսէն: որուն համար կ'ըսուի թէ Իրբիհատի անոււամբ ժողված գրամով առած է: «Իթթիտալ» սկսաւ հրատարակուէլ անորոշ ուղղութեամբ մը, երբեմն Հայերը կը զովէր երբեմն քարեր կը նետէր և Կէրկէրլի պոչէն խածած կը քաշկրտէր: «Իթթիտալ» գէմ գրելու և զայն պախարակելու համար, հակառակորդներէն երզինի թահրիրաթ միւտի-

րի Ալի Խմբի էֆէնտին ալ սկսաւ «Ռէհպէրը Խթիտալ» ամուռնով թերթ մը հրատարակել, ասոր ալ նպատակն էր լոկ իհան Ֆիքրին հարուսածել և «Խթիտալ»ն տապալել։ Այն առեն իրբիհատի անկանոն վարչական խորհուրդին ալ հակառակ սկսաւ գրել և այս թերթին օգնութեան հասաւ երրորդ թուրքերէն թերթ մը Զուզուր Օվա, Մահմուտ Ճէլալէտտին էֆ.ի խըմբագրապետութեամբ։ Վերջապէս Ատանայի թուրքերն մի քանի կուսուկցութեանց բաժնուեցան։ և Հայերը կը գիտէին միայն այս ամենը։

ՀԱՅ ՅԵՆ. ԿՈՒՄԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սահմանագրութեան բարիքները Հայոց ծանօթացներու և Սահմանագրութիւնը ամրապնդելու համար Հայ Յեղ. կուսակցութիւններն ալ ասպարէզ իջան։ Ասոնց մէջ ալ անկեղծներուն հետ կարգ մը շահամոներ խառնուեցան որոնք Ազգային շահը նկատի առնելէ աւելի իրենց անձնական փառքը հետապնդելու նկըրտեցան և որով իրարու մէջ կուսակցական անվայել պայքարն ծայր տուաւ։

Առաջին լսարանը բացուեցաւ Հ. Յ. Դաշնակցութեան ճշմարիտ ներկայացուցիչներու նախաձեռնութեամբ, որմէ ետքը ծնաւ Հնչակեանը և վերջապէս ասոնց երկուքն անջատ չեղոք «Ազգային Լսարան»ը։ Կիրակի օրերն ցաւ ի սիրա երեք տարբեր տեղեր բանախօսութիւններ կ'ըլլար և շատ վերջը բարեբախտաբար պահ մը գոնէ բանախօսութիւններն Մայր Եկեղեցւոյ մէջ միասին ըլլալն որոշուեցաւ Տ. Մուշեղ Մբրագանի ընդդիմութեան և նոյնիոկ հրաժարելու

սպառնալիքին շնորհիւ։ Եւ կուսակցութիւնները մէծ ընդունելութիւն գտած կը խօսէին ու կը զարգացնէին Հայ ժողովուրդը։ Թուրքերն ալ կը յաճախէին սոյն զլիւպները և մաիկ կ'ընէին ու կը ծափակարէին եղած բանախօսութիւնները։

Ազգային Լսարան-Ընթերցատունը գիշերային գասախօսութիւն մ'ալ հաստատեց որով գտաներ կ'աւանդուէին, ուսումնէ, կարդալ գրելէ զուրկ եղողներուն և գործերն այս վիճակին մէջ կ'ընթանային միշտ գէպի յառաջդիմութիւն, լուսաւորութիւն և զարգացում։

Հ. Յ. Դաշնակցութեան Ատանայի մէջ հրապարակ իջած ատենն էր. Խթթիհատի կուսակցութեան կողմէ հրաւէր եկաւ, նշանաւոր Բանաստեղծ-Ազգատական և Ատանայի նախակին կուսականերէն հանգուցեալ Զիս Փաշայի գերեզմանը պաշտօնական այցելութեան երթալու։ Մեծ թիւով Հայեր Ազգ. վարժարան հաւաքուելով գոյնզգոյն գրօշակներով և երգերով միծ շուկային անցուեցաւ և Խթթիհատի գլււազը բազմաթիւ թուրքերու հետ խառնուած այցելուեցաւ «Ուլու Ճամփի» գերեզմանատունը, որուն մէջ թէ Թուրքերուն և թէ Հայերուն կողմէ յուզիչ գամբանականներ խօսուեցան։ Սակայն այս պահերուն կը գիտաւէր և յայտնի կերպով կը տեմուէր թէ կարգ մը յետադէմ թուրք կրօնամոլներու շատ գէշ կ'ազգէր սոյն թուրք և Հայ ցոյցը թուրք մզկիթին մէջ, մանաւանդ Հայերէն երգեր ալ երգուելով։

Տէրսիմի ապատամբապետ Խպրահիմ փաշայի ետեւէն Ատանային զրկուած զինուորնեցուն պատիւ մը եղաւ Հնչակեաններու առաջնորդութեամբ։ Նորէն մէծ թիւով Հայեր կիրակի օր մը Ազգ. Վարժարանին

մէջ ժողված թափորով գրօշակներով «կեցցէ»ներու ազադակներով եւ երգերով գնացուեցաւ : Կամուրջին գլուխը ուր կտգեօններ բաշխուեցաւ զինուորներուն և հրաժեշտի բարեմաղթութիւններ եղան զինուորներուն : Ասոնց ամէնքը սովորյն թուրք կրօնամիներուն ջղիկրուն փափուկ թէլերուն կը գպչէր և մասաւանդ բռնուպիտութեան փարծուած և նոյն միջոցին մեծ մասով պաշտօնանկ եղած պաշտօնեաներու շատ գէշ կ'ազգէր :

Ասոնցուէ եաքը Պոլէն լուսեցաւ իթթիհատ և Ահրոր կուսակցութիւններուն հակառակութիւնները : Ասոր վրայ Ատանայի իթթիհատի կուսակցութեան փափաքը պահ մը մորեցաւ և պազեցաւ և իհասն Ֆիքրին սկսաւ Ահրորի հովեր առնել, զոր մատնանիշ ըրաւ «Շէհակերը իթթատլ» թերթը :

Այս միջացին էր Միութեան և Յառաջդիմութեան կուսակցութեան կեդրունէն Ատանայէն անդամ մը ուղաւեցաւ Սէլանիկ, ուր ընդհանոււր ժողով պիտի գումարուէր : Ատանայի իթթիհատին կողմէ Սէլանիկ զըրկուեցաւ Առողջապահական տեսուչ Տօքթ. Էշրէֆ Սիւյյման պէկ : Էշրէֆ պէկ վերագրաձին վերակազմեց Ատանայի իթթիհատին մասնաճիւղը, նոր ընտրութիւնով և գաղտնի գործելակերպով : Մէկ երկու չայեր ալ նորէն մտած էին սոյն երիրորդ կազմակերպութեան մէջ ալ : Եւ գործերն ու ժողովներն կը մնային գաղտնի իրենց մէջ :

Ազատութիւնն մէկ երկու օր առաջ Պոլիս մեկնող Տ. Մուշեղ Սրբազնն երկար ատեն Պոլիս մնաց հաշկառակ Ատանայի փափուկ ժամանակին : Պահրի փաշալի Ս. Մուշեղ Սրբազնի հակառակորդներն սկսան չարախոսել, Տ. Մուշեղ Սրբազնի թերութիւններն խոշորացոյցով դիտել և ռամիկ ժողովուր-

դըն համողել որ այլեւս չընդունին իրբեւ Առաջնորդ : Տ. Մուշեղ Սրբազնն ասոնց ամենքը լոկով հանդերձ արձակ համարձակ եկաւ Ատանա, թէեւ չի գտաւ նախկին տաք վերաբերումը :

Պահրի փաշալի փախուստէն ետքը մէկ երկու ամիս փոխանորդ կարգուեցաւ Միրլիվա Ալի փաշա որ փախկոտ մէկն էր և կը գողար իթթիհատի գէմէ Այս միջոցին Ատանայի կուսակալ ընտրուեցաւ Գոնիայի կուսակալ ձէվատ պէկ . օրն որ ճիշգ աւստրիական պօլքօթին օրը հասաւ Ատանա, որուն դիմաւորութեան գացող հազարաւոր ժողովուրգներն զլիսէն բռնի հանել տուին ֆէսը :

Ճէվատ պէկ չափազանց տկարակազմ, ծերուեկ եւ ամուրի թուրք մըն էր : Շարժուձեւերն ալ կը մատնէին չոփազանց վախսկոտութիւնն ու անկարսզութիւնը : Միշտ աղաչանքով պաղտառանքով կը վարուէր ընդհանուրին հետ և չէր գիտէր բնաւ իր պաշտօնին յարգն ու աստիճաննը : Պատասխանաւութենէ վախցող, օրէնքին առջեւ գողացող տիպար մըն էր : Մինչդեռ Ատանացիք Պահրի փաշալի խոտութենէն վախցած ու վարժուած, հիմա բոլորովին արձակ համարձակ կը գտնէին ինքինքնին :

Իհասն Ֆիքրի՝ տեսնելով կուսակալն անկարողութիւնը, ուզեց զայն գործիք ընել իր քմահաճոյքներուն և կէրկէրլիի դատին առթիւ ստիպեց որ անմիջապէս պաշտօնանկ ընէ ու գատապարտել տայ և երբ կէրկէրլին անպարտ արձակուեցաւ, ալ փակաւ նոր կուսակալին ձէվատ պէկի պոչին . « կուսակալ զրկած են փայտի կտոր մը, ոչնչութեան օրինակ մը, պառաւ կնիկ մը, որ բանէ մը տեղեկութիւն չունի » գրեց իթթալին մէջ և ճէվատ պէկ ասանկ ծանր նա-

խատինքի մը գէմ լուռ մնաց : իհասն՝ ա՛լ աւելի համարձակութիւն գտած՝ հարուածեց, անպատճեց եւ զէրօլի իջեցուց կուսակալին ստափճանը : Եւ Ճէվատ պէջ լուռ ու մունջ տուն կ'երթար տուանց անդամ մը գոնէ շուկան իջնելու և տեսնելու իր գտնուած քաղաքն : Ամէն մարդ կ'ուզէր կուսակալը տեսնել եւ կուսակալն իր սենեակին մէկ անկիւնը կծկտած նըստած էր : Իհասն Ֆիքրի կուսակալին հրաժարումը առաջարկեց Իթիսալին մէջ, որուն ականջ տուող չեղու և վերջապէս իր գրէմը լուծելու համար Կէրկէրլիի գէմ միթինկ մը կազմելու ծանուցում մը հրատարակեց, որուն միջոցին կուսակալին ալ հակառակ խօսուելով հրաժարումը պիտի խնդրուէր : Միւս կողմէ Կէրկէրլիի մարդիկն ալ կարդ մը արբանեակներով միթինկ մը գումարելու ծանուցում մ'ըրին միենոյն տեղույն համար : Բարեբախտաբար նոյն օրը և նոյն ժամուն առատ անձրեւ մը տեղաց և որով բնական կերպով առաջքն առնուեցաւ սոսկալի արիւնահեղութեան մը : Երկրորդ միթինկի ձեռնարկութիւնն արգիլուեցաւ ստափկանութեան կողմէ որով իհասն ա՛լ աւելի կատղեցաւ :

Կուսակալ Ճէվատ պէկը Ատանս հասածին պէս լիցուած ու թունառուած էր Առաջնորդ Տ. Մուշեղ Սրբազնի մասին . որով շատ պաղ ընդոնելութիւն գտաւ Տ. Մուշեղ Սրբազն նորեկ կուսակալէն : Առաջնորդին միջամտած խնդիրը ընդհակառակը կը կատարուէր և որով մեծ յուսահատութեան մը մատնուած էր : Տ. Մուշեղ որբազն Ատանսայի շրջականերն այցելութեան ելած էր և իրզինի կառավարիչին Ատափ պէկի կողմէ պաղ ընդունելութիւն և հակառակութիւն գտած էր : Կուսակալութեան անարժան

Ճէվատ պէկը Համիտիյէ այցելելով Հայոց Եկեղեցին զանգակին հնչումը արգիլած էր և որով տեղույն Հայերը մեծ յուսահատութեան հատնուելով Ատանայի առաջնորդին դիմեցին :

Առաջնորդն Ատանս վերադարձին էրզինի կառավարիչին և Ատանայի կուսակալին կարգ մը ապօրինի արարքներուն համար բողոքեց Երեսի . Ժողովրդին, Վարչապետին և ուրիշ տեղերու : Բողոքագրին օրինակը հրատարակուած էր Պոլսոյ Եկեղի Կազերտային մէջ : Ասափ պէկ Առաջնորդին բողոքագրին ու ամբաստանութիւններն կարգալով կատղած էր և անմիջապէս խիստ պատասխանագիր մը հրատարակեց Թիուպէր Իթիսալ թերթին մեջ, Տ. Մուշեղ Սրբազն ամբաստանած էր իրբեւ բռնակալ կաշառակիր և Պահը փաշայի կաշառաքի միջոցը : Սրբազնն պատասխանը գրեց և սակայն թուրք թերթը չի հրտարակեց և այս միջոցին գիշերօթիկ վարժարանի մը ծախքն հանգանակելու համար Տ. Մուշեղ Սրբազն Եղիպտոս մեկնեցաւ, ուր կը մնայ մինչեւ այսօր :

Սահմանադրութեան հրատարակումէն հառք ամէն տեսակ զէնքեր հասան Ատանս և արձակ համարձակ կը ծախուէին : Անցեալ տարուան Յուլիսի վերջերէն մինչեւ այս տարուան Ապրիլ 1 թուականը Ատանայի մէջ ամենէն աւելի ծախուած ու սպառուածն էր՝ միայն հրազէն : Ազատութեան քարոզիչներ իհսան Ֆիքրի և ուրիշներ կը պոռային «Զինուեցէք և պատրաստուեցէք Սահմանադրութիւնը պահպանելու» : Ժողովութիւն լուսամիտ և ուսմիկ դազակարգերն հաւասար չափով և մանաւանդ գիւղացիներն մեծ եռանդով կը զինուէին և իրենց ունեցածն ու չունեցածը տալով զէնք և միայն զէնք կ'առնէին : Շուկաները հոս հոն

զինավաճառներու նորանոր խանութներ բացուեցան և կարծես ժողովուրդը կը յափշտակէր զէնքերը : Օրուան առեւտուրը եւ շահը զէնքի վրայ էր : Շուկաները պարտող տասնեակ մունետիկներ զէնք և միայն զէնք կը ծախէին : Բազմաթիւ թուրք տղաքներ շուկաներու մէջ տանձ խնձորի տեղ կապարէ փամփուշտներ կը ծախէին եւ « իքիչէր մէթալիէ Գարատաղ ֆիշէնկի » ձայներով մեր ականջները կը խունացին : Այս ամենը տեղական կառավարութեան աչքին առջեւ կ'ըլլար , և կառավարութիւնը չէր արգիլեր : Զինավաճառներն իրենց զէնքերը ծախելու համար , նորանոր սուտեր յերիւրելով մէջտեղ կը նետէին : Ինչպէս անցեալ տարի Բամազանի Պայրամին օրուան համար լուր ելու թէ « Հայերը պիտի ջարդուին » : Կառավարութեան աչալրջութեան շնորհիւ բան մը չեղաւ : Վերջը լուր հանեցին թէ « Տասն օր եաքը Հայերը անպատճառ պիտի ջարդուին » և այս ջարդի լուրերը շարունակեց մինչեւ սեւ , անիծեալ օրերը :

Եւ Հայու Զարդը փափաքոյ վատ մոլեռանդները տեսակ տեսակ սուտերով և գործերով կը գրգռէին թուրք խուժանը : Օր մը լուր հանեցին թէ Հայերը զինարանը պիտի կոխէն , ուրիշ օր մ'ալ տարաձայնեցին որ Հաճընի ժողովուրդը ապստամբած Ատանայի վրայ կը քալէ , ևն . ևն . : Թելազը իշներուն նըպատակն էր այս սուտ զրոյցներով թուրք խուժանը գրգռել և Հայերուն վրայ յարձակել տալ : Օր մ'ալ յանկարծ լուրեցաւ թէ Ուլու Ճամի՝ մեծ մզկիթին դուռը աղտ քսած են : Սոյն լուրը մեծ սարսափի մատնեց Ատանայի Հայութիւնը և կառավարութիւնը երկրորդ գիշերը մասնաւոր պահակներու միջոցաւ բռնել տուած էր աղտ քսողները , որոնք քննուելով հաս-

կըցուած էր թէ թուրք էին և դիտմամբ կ'ընէին : Կտուավարութիւնը առանց պատժելու ազատ արձակած էր ըսին այն վատերը և որով ջարդի թալանի սիրահար վայրագները ազատ ասպարէզ գտան և աշխատեցան օրէ օր իրենց համախոններ պատրաստել : Օրեր կ'անցնէին և ջարդի լուրերը կ'ընդհանրանացին :

Պուազ մէջ յեղինզուած « չէրիաթ կ'ուզենք » խօսքը Ատանայի մէջ ալ արձագանդ գտաւ : Նոյնիսկ օր մը կարգ մը թուրքեր շուկան ինկած սկսան պոռալ « կիները շուկան չի պիտի ելլեն մեր չէրիաթը կ'արգիլէ , հակառակը շարժազներն ըզիկ ըզիկ պիտի ընենք » : Հայերը սարսափած կառավարութեան դիմեցին և կառավարութիւնը այդ չարագործները շուկաներէն ժողվելով բանտարկեց և օր մը վերջն ալ արձակեց : Արդէն ձէվատ պէտի պէս թուլամորթ անկարող կուսակալէ մը ասկէ աւելի ի՞նչ կ'սպասուէր , սակայն անոր անկարողութիւնը մեզի շատ սուղի տպրանք եղաւ :

Մօտեցան անիծեալ օրերն և տարաձայնութիւն մը սկսաւ « Հայոց Զատկին օրը պիտի յարձակին թուրքերը » :

ՅԱՐՁԱԿՈՒՄԻ ՍԿԶԲՆԱԿՈՐՈՒԹԻՒՆ

Զատիկէն տասնեհինդ օր առաջ Թարսուս գափուսու մզկիթին գիմացը Տէրէնտէլիցի թուրք նպարավաճառ մը գիշերը Հայ տղայ մը բռնի ներս քաշելով բերանը քուրջերով թխած և վայրենաբար Ակած էր : Մի քանի օր ետքը Սիսէն Ատանայի երեքշաբթի օրուած պաշարը եկող կարսւանը ճամբան կողսպատած և մի քանի Հայեր ծանրապէս վիրաւորած

էին : Այն օրերուն մէջ էր որ շուկան իսպէր Օղլուի օթէլին առջեւ Հնչակեան Կուսակցութեան վարչական Խորհուրդի անդամներէն Զալեանը հրապարակաւ ապատակահարուեցաւ մի քանի թուրք երիտասարդներու կողմէ :

Զատիկէն ութ օր առաջ Թօսպաղի գալէսի թաղէն Հայ պատանի մը յարձակում կրեց մի քանի թուրք սրիկաներու կողմէ և դժուարաւ ազատեցաւ անոնց ձեռքէն, երկրորդ յարձակումին դանակով սպառնացած էին և որով Հայ Երիտասարդն անձնապաշտանութեան համար ատրճանակ պարպած էր յարձակողներուն վրայ, որոնցմէ մին վայրկենական և միւսը երկու օր ետքը մեռան և ասոնց դիակները անցուցին թուրք թաղերու մէջէն գրգռելով թուրք խուժանը Հայոց դէմ : Հայ տղան փախաւ և թուրքերն յարձակեցան ոճրագործ տղուն թաղը, պահանջելով յանձնումը Հայ տղուն : Հայերը լեղապատար կառավարութեան գուսը վազելով պաշտպանութիւն խնդրեցին և կառավարութիւնը անկարող եղաւ զսպելու թուրք խուժանը : Այլեւս լաւագոյն առիթը ներկայացած էր Հայկական չարգին :

Պոլիսը խառնուած, տեղական թուրքերուն ամէն գասակարգը գրգռուած, կառավարութիւնը կատարելապէս անկարսղութեան մատնուած, նոյն միջոցին անշուշտ զինուորական ոյժն ալ Հայոց հակառակ լարուած, ասոնցմէ աւելի յարմար առիթներ անկարելի էր որ ներկայանար : Եւ ժամէ ժամ հասաւ ահաելի աղէտը, սարսափելի ջարդ թալան ու հրդեհը որոնք առաջին անգամ Ապրիլ 1ին սկսան և տեւեցին երեք օր չորս գիշեր և երկրորդ աւելի սոսկալի ջարդն ու հրդեհներն սկսան Ապրիլ 12ին կիրակի իրիկուն և տեւեցին մինչեւ հետեւեալ օրուան իրիկունը որ արգէն Հայու առւն և տեղ չէր մնացած, մինակ Մայր եկեղին և շրջական մի քանի տուներ ազատեցան :

ԱՏԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳԸ	Դազա	Նահիյէ	Գիւղ
ԱՏԱՆԱՅԻ	2	5	311
	Համիտլիէ		
	Գարախալու (Զէնէլի)	1	94
ԳՈԶԱՆ—ՄԻՄ	3	2	66
	Հաճըն		
	Ֆէքէ (Վահգա)	1	93
	Գարս Փազար	1	53
ՄԵՐՄԻՆ	1	1	188
	Թարսուս (Տարսոն)	2	81
ՃԵՐԵԿԸ Պէրէբէթ	5	2	8
—ԵՐՉԻՆ	0սմանիէ	3	41
	Իսլահիէ		67
	Փայտս	1	41
	Խասոս		38
	Պուլանըգ (Պաղչէ)		40

Ատանայի եւ Երջակայ Առաջն Թէմերու հաղաք եւ գիւղերուն Հայ բնակչութեան 1908 տարւոյն մարդահամարի պատօնական ցանկը :

Ատանա 17844, Տարսոն 3139, Մէրսին 2297, Զօդ Մարզուան 4850, Համիտլիէ 418, Օսմանիէ 720, Միսիս 500, Հասան Պէկի 1848, Պաղչա 722, Էօզէրլի 1056, Նաճարլ 437, Օճագլ 1940, Սիլիֆքէ 371, Եարփուզ 233, Էրգին 10, Գոզ օլուգ 290, Հայ գիւ, 190, Ինճիրլիք 250, Շէյխ Մուրատ 160, Գայրը 84, Կէմի Սիւրէն 37, Միհմանտար 43, Թանկրը Վէրտի 95, Մարս 85, Գայրագ պանըսը 25, Քիշնէշ 150, Էքպէզ 450, Ֆասըլ կամ Էյրի Պուճագ 70, Հաճըրլար 40, Քիւրէճի 15, Տէմրէկ 5, Թէյէք 120, Իսահիէ 4, Գայր պաշը 25, Պաղչէ 26, Քէլէր 178, Էնթիլլի 131, Քիւնէս 60, Փաշա Զիֆթլիկի 17, Պոսթան աղա Զիֆթլիկի 30, Գուշճու Մուսթաֆա 140, Գըզլան 60, Մավրանլը 30, Լափաճ 490, Խառնը 524, Կէօք Զալիր 208, Գուրտլար 66, Ապտողլու 340:

ՑԱՆԿ ՆԻՒԹՈՅ



ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔ

Ալտանայի ամենասփոյլուն, անցեալին մէկ մահքանկարը ներ-
կայացնելով զգացնել ուզեցի կորուստին առտիճանը եւ բաց-
ուած վէրբին անդարսանելիութիւնը : Եւ ասկայն դժբախ-
առքար Ալտանայի տչուելի ջարդեն ետքը խուժանաթերթն իրի-
տակ կարդ մը վայրաշաչութիւններէ ետքը կը գրէր «մեր Ալտա-
նան ասկէ ետքը շատ լաւ պիտի ըլլայ»***

Զարդին սկզբանապատճառները մասսմի՛ հքատարակուած են
իոկ ներկայ հքատարակութեանս վէրջին մասերը ականատեսի
տպաւորութիւններ են, որոնք յառաջաբանը պիտի ըլլան ի մօ-
ւայ հքատարակելիք «Կիլիկիոյ ԱղէՏի» պատկերավարդ ընդար-
ձակ երկիս:

፲፭፻፯፷፯



۸۰

Առանձին Տեղագրականը	5
Կլիմայ	8
Գործարաններ	8
Ապրուստ	9
Հնկերային վիճակ	11

• T U L U

Ատանայի սովորութիւններ	14
Ամուսնութիւն	14
Նշանախօսութիւն	15
Հարսանիք	17

Τ. ΠΡΩΥ

Եկեղեցական վիճակ	20
Կրթական վիճակ	24
Վաճառականական վիճակ	25

• U U U

Սահմանադրութենէն առաջ	28
Հայու հալածանք	28
Հայ և Թուրք յարաբերութիւններ	31
Սահմանադրութենէն ետքը	33
Աստանայի թուրքերէն լրագիրները	37
Հայ Եթղ. կուսակցութիւնները	38
Յարձակումի սկզբնաւորութիւն	45
Աստանայի նահանգը	47
Աստանայի և շրջակայից Հայ բնակչութեանց պաշտօնական մարդահամարն	47
Լերջարան	48

ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ

ԱՐԺԻԵՍՏ ՀՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ

Յ Դր .

Մեկ ժամուան մեջ Լուսանկարչութիւն կը սորվեցնէ

Պիտի հրատարակուի մօս օրեն

«ԿԻԼԻԿԻՈԹ ԱՂԷՏԸ» , Պատկերազարդ



«ԱՏԱՆԱՅԻ ԿԵԱՆՔԸ» ին

Գի՞նն է Յ դր . , Թղթատրով 4 դր .



Վաճառման կեդրոնատեղին է «ԴԵՂԱՐԱՆ ԹՔՔՁԵԱՆ» ,
Գում Գոփու , Կ. ՊՈԼԻՍ

ՀՀ Ազգային գրադարան



NL0232914

55.420